

# Բացում Գալիֆորնիոյ Մայր Տաճարի Յուշարձանին

Մեծ Եղեռնի, Արցախի եւ Շիրակի երկրաշարժի հայ բոլոր նահատակներուն եւ զոհերուն նուիրուած տպաւորիչ յուշարձանի մը բացումը տեղի ունեցաւ Հոլիվուտի մէջ, Կիրակի 30 Ապրիլին: Յուշարձանը կանգնած է Ս. Յովհաննու Կարապետ Մայր Տաճարի կողքին, նախաձեռնութեամբ եկեղեցիին հիգարարութեան:

Բացման հանդիսութեան մասնակցեցան Առաջնորդ Արքայան Վաչէ Արքեպս. Յովսէփեան, Տաճարի հովիւ Տ. Վարդան Աւագ Քհնյ. Թադեոսեան, Մխական Խորհուրդի ատենապետ Ընկ. Գէորգ Քիւրէլեան, իսկ Ընկ. Անդրանիկ Անդրէասեան,



Յուշարձանին առջեւ հոգեհանգստեան պաշտօնին կը մասնակցին Առաջնորդ Վաչէ Արքեպս. Յովսէփեան, Վարդան Աւագ Քհնյ. Թադեոսեան, Վազգէն Քհնյ. Պեֆեարեան: Նկարին մէջ կ'երևին Ընկ. Անդրանիկ Անդրէասեան, Ընկ. Վաչէ Սեմերճեան, Տիկ. Հրանոյշ Քիւրէլեան եւ ներկայ հասարակութենէն մաս մը

Ընկ. Հրանոյշ Քիւրէլեան ու պատանի Լիլիթ Օհաննէսեան (երկրաշարժէն վերապ-

րող) յաջորդաբար վար առին Ցեղասպանութեան, Արցախեան Շարժումի եւ երկրաշարժի նահատակներուն ու զոհերուն նուիրուած Յուշարձանին թեւերը ծածկող վարագոյրները: Ներկայ էին նաեւ կուսակցական, մշակութային միութեանց ներկայացուցիչներ ու Տիգրանեան Վարժարանի ուսանողներ:

Յուշարձանի նախագծումն ու քանդակումը գործն է Գագիկ Ֆարհատեանի: Եկեղեցւոյ կողքին կանգնած սեւ պազալտէ կառուցուած Յուշարձանը միասնական հայ ժողովուրդը խորհրդանշող միակտուր սեղանէն վեր խոյացող երեք թեւերունի: Կեդրոնի թեւը նուիրուած է (Շար.ը տեսնել 13րդ էջ)

## Նախաձեռնութեամբ Հ.Բ.Ը.Մ.ի Եւ Մետիքըլ Աուրիչի

### 50 Վերապրողներ Դարմանումի Պիտի Գան Նիւ Եորք

Հայաստանի երկրաշարժէն վերապրող 50 վիրաւորներու նոր խումբ մը Երեւանէն պիտի հասնի Ամերիկա, Չորեքշաբթի Մայիս 17ին, Նիւ Եորքի Քենետի Միջազգային Օդանավակայանը, PAN AM-ի Թռիչք 91-ով:

Օդակայան դիմաւորելու պիտի գան Նիւ Եորքի շրջանէն բժշկական խումբ մը, տեղական պաշտօնատարներ եւ կամաւոր աշխատակորներ, որոնցմէ իւրաքանչիւրը պիտի ստանան զարմանուող անձի մը հոգատարութիւնը, մինչեւ հիւանդին Հայաստան վերադարձը:

Ամերիկա եկող ամենէն մեծաթիւ հիւանդներու խումբն է ասիկա, նախապէս եկող վիրաւորներու եւ հաշմանդամ- (Շար.ը տեսնել 11րդ էջ)

## ՅՈՒՇԱՐՁԱՆ

(Ծար. առաջին էջին)

ուած է Հայկական Յեղասպանութեան 1.5 միլիոն հայ նահատակներուն, ձախ թեր, Արցախեան Շարժումի՝ մանաւանդ Սուճկայիթի եւ Կիրովապատի մէջ ինկած, ատրպէյճանցի ջարդարարներու զոհ հայ մարտիրոսներուն նուիրուած է, իսկ աջ թեր կանգնած է յիշատակ Շիրակի ու Լոռիի աղէ-

տալի երկրաշարժի տասնեակ հազարաւոր զոհերուն:

Հանդիսաւոր արարողութեան բացման խօսքը կատարեց Միսական Խորհուրդի ատենապետ Ընկ. Գէորգ Քիւրէլեան, ապա հանդամանօրէն խօսք առին Ս. Յովհաննու Կարապետ Տաճարի հովիւ Տ. Վարդան Ա. Քհնյ. Թաղեւոսեան, նոր Սերունդ Մշակութային Միութեան ներկայացուցիչ Գաբրիէլ Մուրջեան ու Թէքէեան Մշակութային Միութեան ներկայացուցիչ Ընկ. Վարդգէս

Փուրուեան. ուղերձով հանդէս եկաւ Տիգրանեան Վարժարանի ուսանողուհի Այտա Հայրապետեան: Հանդիսութեան յայտագիրի փակման խօսքը եւ աղօթքը կատարեց Առաջնորդ Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեան:

Առաջին անգամն է որ սփիւռքի մէջ կը կանգնի ամբողջ հայ ժողովուրդը հարուածած մարդկային ու բնութեան շարիքներու զոհերուն նուիրուած յուշարձան մը՝ նոյն կառոյցով ու նոյն փայրին մէջ: